ISSN 1829-2925

ՇՈՂԻԿ

Shoghik
2022/4

AMAA
ARMENIAN MISSIONARY ASSOCIATION OF AMERICA
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ



Սեդրակ Առաքելյան. «Աշնանային բնանկար»
1933-34թ.

Հիմնադիր՝
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Խմբագրական խորհուրդ՝

Պատասխանատու խմբագիր՝ վեր. Ավետիք Խաչատրյան
Գեղ. խմբագիր՝ Լիլիթ Անտոնյան
Խմբագիր և սրբագրիչ՝ Լյուսյա Առաքելյան
Էջերի ձևավորումը՝ Արման Սարգսյանի

Editorial committee:

Chief Editor: Rev. Avetik Khachatryan
Content Manager: Lilit Antonyan
Copy Editor: Lyusya Arakelyan
Design and Illustration: Arman Sargsyan

Գրանցման վկայական՝
01Մ 000035
Հրատարակչության 21-րդ տարի
ՀԱԸ
ՀՀ, 0019, Երևան,
Բաղրամյան 18
18 Bagramyan avenue
Yerevan, Armenia 0019
Հեռ./Tel. (+374 10) 54 35 52, 54 35 76
կայք/website: www.shoghik.am
էլ. փոստ/E-mail: ce@eca.am

«Շողիկից» մեջբերումներ անելու դեպքում հղումը պարտադիր է:

©ՀԱԵ/ECA

Տպագրվել է «Մագաղաթ» տպարանում:
Տպաքանակը՝ 4.000:
Տարածվում է անվճար:

Բարեկամը միշտ է սիրում, և եղբայրը նեղ ժամանակի համար է ծնված: Առակներ 17.17

Կյանքի տարբեր փուլերում մենք ձեռք ենք բերում ընկերներ, ովքեր մեզ համար դառնում են բարեկամներ: Նրանց հետ է, որ մենք սիրում ենք կիսել մեր կյանքի ուրախ օրերը, իսկ դժվարությունների մասին շատ հաճախ ավելի շուտ պատմում ենք ընկերներին, քան մեր ընտանիքի անդամներին: Սակայն, ցավոք սրտի, ոչ բոլոր ընկերություններն են երկար տևում: «Առակներ» գրքի այս համարը մեզ ցույց է տալիս, թե որքան ամուր կապերով մենք պետք է կապված լինենք մեր ընկերներին:

Ընկերները, ինչպես մկրատի երկու ծայրերը, անբաժան պետք է լինեն: Նրանք մեկը մյուսի կարիքն ունեն: Ընկերության մեջ եսասիրությունը վերջ է դնում անգամ ամենամոտ հարաբերություններին, մինչդեռ փոխադարձ աջակցությունն էլ ավելի է մտերմացնում և ջերմացնում:

Հիշենք աստվածաշնչյան այն պատմությունը, երբ չորս ընկերներն իրենց անդամալույծ ընկերոջն օգնելու համար նրան առաստաղից իջեցրին Հիսուսի մոտ: Չկարողանալով դռնից ներս մտնել՝ նրանք չհանձնվեցին, փնտրեցին այլ ճանապարհներ ու միջոցներ:

Այսօր ինչպե՞ս կարող ենք օգնել մեր ընկերներին, ինչի՞ կարիք ունեն նրանք: Պատասխանները կարող են տարբեր լինել: Սակայն ամենամեծ օգնությունը, որ մենք կարող ենք ցուցաբերել մեր ընկերոջը, նրան Հիսուսի մոտ տանելն է: Ի՞նչ ճանապարհով. ամեն հնարավոր և անհնար միջոցներով: Եվ ինչպես Հիսուսը տեսավ այդ չորսի հավատքը և բժշկեց ու օգնեց նրանց ընկերոջը, այդպես էլ կտեսնի մեր հավատքն ու ջանքերը:

Սիրելով մեր ընկերներին՝ մենք պետք է ծառայենք և հավատարիմ լինենք նրանց, ինչպես Հիսուսն Ինքը ծառայեց Իր ընկերներին և աշակերտներին:
Ուզո՞ւմ ես Հիսուսի նման ընկեր լինել:

Լիլիթ Անտոնյան

ԱՆԴԱՄԱԼՈՒՅԾԻ ԲԺՇԿՈՒՄԸ

Մի օր, երբ Հիսուսը մի տան ներսում զրուցում էր Օրենքի ուսուցիչների հետ, տանիքում աղմուկ լսվեց, ու հանկարծ առաստաղի մեջտեղում մի մեծ անցք բացվեց:

Անցքից երևացին մարդկանց դեմքեր, ու մի մահիճ իջեցվեց ներքև՝ Հիսուսի մոտ: Մահճի վրա պառկած էր մեկը, որը չէր կարողանում քայլել: Ընկերներն էին նրան բերել այդտեղ՝ համոզված լինելով, որ Հիսուսն անպայման կբուժի: Նրանք չէին կարողացել իրենց ընկերոջը դռնից ներս տանել, որովհետև շատ մարդ էր հավաքվել այդ տանը: Այդ պատճառով էլ այլ ճանապարհ էին գտել. դրսի աստիճաններով անդամալույծին բարձրացրել էին տանիք, անցք բացել ու մահիճը պարաններով իջեցրել ներքև:

Հիսուսը սիրալիր նայեց անդամալույծին և ասաց.

- Ո՛վ մարդ, քո մեղքերը ներված են քեզ:

Փարիսեցիներն ու դպիրները սկսեցին փնթփնթալ. «Սա ո՞վ է, որ հայհոյություն է խոսում: Աստծուց բացի ո՞վ կարող է մեղքերի թողություն տալ»:

Երբ Հիսուսը նրանց խորհուրդներն իմացավ, պատասխանեց ու ասաց.

- Վե՛ր կաց, վերցրո՛ւ մահիճդ և գնա՛:

Սա ասաց, որպեսզի իմանան, որ Մարդու Որդին երկրի վրա իշխանություն ունի մեղքերը ներելու:

Բժշկվածն անմիջապես վեր կացավ, վերցրեց մահիճն ու տուն գնաց՝ Աստծուն փառաբանելով: Եվ բոլորն ապշեցին ու փառավորեցին Աստծուն:

Ղուկասի ավետարան 5.17-26

Մտածի՛ր այս մասին:
Անդամալույծի ընկերները Հիսուսի մոտ գնալու արտասովոր ճանապարհ գտան: Կարո՞ղ ենք մենք էլ օգնել մեր ընկերներին՝ գտնելու Հիսուսին: Ինչպե՞ս:

Աղոթք
Սիրելի՛ Հիսուս, շնորհակալ եմ իմ ընկերների համար, որոնք օգնում են ինձ:
Օգնի՛ր ինձ, որպեսզի ե՛ս էլ կարողանամ հրաշալի ընկեր լինել ինձ շրջապատողների համար:

ԽՆԱՄԻՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՅԳԻՆ

Երբ դու հոգ ես տանում քո ընկերների մասին, այն նման է այգին մշակելուն: Ինչպես ծառերն ու ծաղիկներն աճելու համար խնամքի կարիք ունեն, այդպես էլ մեր ընկերները մեր բարի վերաբերմունքի կարիքն ունեն:

Գրի՛ր՝ ինչպե՞ս կարող ես լավ ընկեր լինել:



Ծովային ընկերները

Դելֆինները կետանմանների կարգի ներկայացուցիչներ են: Նրանք ապրում են ծովում, բայց օդը շնչում են գլխի վերին մասում եղած հատուկ անցքի միջոցով: Այդ պատճառով նրանք պետք է հաճախ դուրս լողան, որպեսզի օդ հավաքեն: Սովորաբար նրանք լողում են ոչ մեծ խմբերով՝ միասին սուզվելով և դուրս ցատկելով ջրից: Երբեմն նրանք նույնիսկ սահում են ջրի վրայով, ինչպես սերֆինգով զբաղվող մարդիկ: Դելֆինները շատ մեծ հոգատարությամբ են վերաբերվում միմյանց: Եթե նրանցից մեկը հիվանդանում է, մյուսները հոգ են տանում նրա մասին և պաշտպանում են նրան վտանգից: Նրանք կարող են նույնիսկ հիվանդ ընկերոջը հրել դեպի ջրի մակերես, որպեսզի նա շունչ առնի: Առանց նրանց օգնության նա կարող է խեղդվել: Աստված մեզնից յուրաքանչյուրին լավ ընկերներ է պարգևել: Մենք ոչ միայն միասին խաղում ենք, այլև օգնում ենք միմյանց: Մենք բոլորս գիտենք՝ որքան լավ է, երբ մեր կողքին ընկեր կա, հատկապես երբ միայնակ ենք, տխուր կամ վախեցած:

Աստված ուզում է, որ մենք կարողանանք ընկերություն անել: Եթե դու տեսնում ես, որ ինչ-որ մեկը միայնակ նստած է, նրան հրավիրի՛ր խաղալու: Եթե տեսնում ես, որ ինչ-որ մեկը տխուր է, գրկի՛ր նրան, հարցրո՛ւ, թե ինչ է պատահել և լսի՛ր պատասխանը: Լավ ընկերները շատ թանկագին նվեր են Աստծո կողմից:

Բարեկամը միշտ է սիրում, ու եղբայրը նեղ ժամանակի համար է ծնված:
Առակներ 17.17

ԲԵՐՆԻՍ ԽՈՍՔԵՐԸ



Ճանապարհ մեր ընկերոջ

Դժվար է գտնել մի մարդ, ով իր կյանքում չունի գոնե մի ընկեր, ում կկարողանա վստահել ամեն բան, ում մոտ կծիծաղի, կանկեղծանա, կարտասվի և սփոփանքի խոսքեր կգտնի: Դեռ մանկուց սիրում էի ընկերական խմբերում լինել, նրանց հետ կատակել, վտանգավոր որոշումներ կայացնել: Հիշում եմ մեր ունեցած լավ և վատ սովորությունները: Ամռանը մեր ամբողջ օրն անցնում էր բակի խաղերով: Դե այո, չունեինք խաղերի այդքան մեծ հնարավորություն, բայց նույնիսկ ամենաչնչին հնարավորությունը մեզ համար դառնում էր հրաշալի ժամանց, իսկ հարևան բակի մրգատու ծառերն օրերի ընթացքում պարզապես «մերկանում» էին, քանի որ բակի սոված տղաներն ու աղջիկները մրգերի վերջը տալիս էին:

Մեծանալով՝ տանում ենք մեզ հետ հիշողություններ, սովորություններ, բայց տարիների ընթացում ընկերները ոչ միշտ են մեզ հետ մնում: Եվ դա արդարացված սովորություն է, քանի որ փոխվում է մեր աշխարահայացքը, ընտրությունը և կյանքի ձևը...

Երբ հետ եմ նայում դեպի գունավոր մանկություն, տեսնում եմ, որ միայն մեկն է մնացել ինձ հետ, և նրա անունը Հիսուս է:

Նրա հետ ծանոթացել եմ բակային ճամբարի ժամանակ: Ինչպես այսօր, 2000 թվականին նույնպես կազմակերպվում էին ամառային հոգևոր ճամբարներ: Սկզբում գնում էի միայն խաղերի, նվերնների համար, ինչպես իմ մնացած ընկերները, բայց... Երբ առաջին անգամ լսեցի Հիսուսի մասին, մի տեսակ ապահովություն, ջերմություն զգացի, որը երբևէ չէի զգացել:

կերոջս

Ինձ համար Նա առեղծվածային հերոս էր, ում մասին ամեն մի պատմություն ես հիացմունքով էի լսում: Անցան տարիներ... Նա մնացել է այդ նույն Հերոսը, սակայն ոչ թե առեղծվածային, այլ որպես իրական ընկեր, որպես մեկը, ում մոտ ես այնպիսինն եմ, ինչպիսին որ կամ՝ իմ թերություններով, կամակորություններով և իհարկե մշտական կարիքով, որը հենց Նա է՝ Հիսուս Քրիստոսը:

Մենք բոլորս էլ քաջ գիտակցում ենք, որ կյանքը մշտապես ընտրությունների, կորցնելու և ձեռք բերելու մրցավազք է, և հաճախ կենտրոնանալով մեկ ուղղության վրա՝ չենք նկատում ամենակարևորը՝ ամենաիրական Ընկերոջը, Ով պատրաստ է մեզ հետ վազել մեր երազանքների, նպատակների և ձեռքբերումների ճանապարհով, Ով չի նախանձի, չի կողոպտի, այլ բարի խրատներով կտանի այնտեղ, որտեղ հարկավոր է...

Եվ եթե անգամ թուլանում է իմ և Ընկերոջս հարաբերությունները իմ փորձությունների պատճառով, ես քաջալերվում եմ այս տողերով՝ «Ես քեզ երբեք չեմ թողնի և ոչ էլ կլքեմ» (Եբրայեցիների 13.5): Եվ նորից ավելի ջերմորեն է սկսվում մեր ընկերությունը:
Ես հավատարիմ ընկեր ունեմ, ում անունը Հիսուս է... Իսկ դո՞ւ:

Զոհրաբ Բեկ

Աստվածաշնչյան վիկտորինա

1.Ի՞նչ փոխադրամիջոցով էր Փարավոնը հետապնդում իսրայելցիներին, երբ նրանք դուրս էին գալիս Եգիպտոսից:



2.Հիսուսի ծնվելուց հետո ի՞նչ հայտնվեց երկնքում:

3.Ո՞ր թռչունը Նոյին լուր բերեց ջրերը ցամաքելու մասին:

4.Ո՞ւր բարձրացավ Զաքեոսը՝ Հիսուսին տեսնելու համար:



5.Աստված ո՞ւմ հրամայեց կուլ տալ Հովնանին:

6.Ի՞նչ երաժշտական գործիք էր նվագում Դավիթը Սավուղ թագավորի համար:

7.Անառակ որդին օտար երկրում ի՞նչ կենդանի էր պահում:

8.Երբ Պետրոսը ջրի վրա քայլելիս խեղդվում էր, ի՞նչ մեկնեց Հիսուսը՝ նրան փրկելու համար:

9.Հրեշտակներն առաջինը ո՞ւմ ավետեցին Հիսուսի ծննդյան բարի լուրը:

10.Հիսուսը ինչո՞վ կերակրեց 5000 -ին:



11.Աստվածաշնչյան ո՞ր հերոսն է պատկերված նկարում:

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՐԵՐ

Պարե՛ց Սասունն, ու ողջ աշխարհը հիացա՛վ,
Պարե՛ց Սասունն, ու ողջ աշխարհը հասկացա՛վ,
Որ պա՛ր չէ սա, այլ մի երկրի հի՛ն պատմություն,
Ուր պարտությու՛նն անգամ ունի հպարտությու՛ն:
Գ. Էմին

Հայ ժողովրդի մշակութային հարուստ ժառանգության մեջ պատվավոր տեղ են գրավում ռազմական պարերը: Դրանք տարածված են եղել հատկապես հայոց անառիկ բնության և դյուցազունների հայրենիք Սասունում:

Երբ փորձում ենք պարզել, թե որտեղ են հայկական ռազմական պարերի ակունքները, պատմությունը մեզ տանում է դարերի խորքը: Ռազմական պարերի մասին բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել հայ մատենագիտության մեջ: Պատմահայր Մ. Խորենացին հայոց Արտաշես թագավորի թաղման արարողության նկարագրության մեջ հիշատակում է ռազմական պարերի մասին:

Սակայն հայերի մեջ ռազմական պարերի գոյության անժխտելի ապացույցը մինչ օրս պահպանված մոտ 30 անուն տղամարդկանց պարերն են, որոնցում բացահայտորեն արտահայտված է ռազմի և հակամարտության գաղափարը:
Ռազմական պարերը հիմնականում կատարվել են ճակատամարտերից առաջ՝ բանակի մարտական ոգին բարձրացնելու նպատակով: Սակայն կային նաև պարեր, որոնք պարում էին հաղթական պատերազմից հետո. դրանք թատերական ներկայացումների ձևով պատկերում էին ռազմի ընթացքը կամ ճակատամարտի որոշ դրվագներ: Դրանք կոչվում էին «Պարք Բանակաց»:



Հայոց աշխարհում ռազմական պարերի տարածված լինելը պատահական երևույթ չէ. այս պարերն ակնհայտորեն հետապնդել են երիտասարդ տղաների ֆիզիկական դաստիարակության նպատակ: Մեր իմաստուն նախնիները ռազմական պարերի միջոցով պատանիների մեջ դաստիարակել են ճարպկություն, դիմացկունություն, զենքին տիրապետելու, վահան ու թուր գործածելու հմտություն: Իսկ վերոնշյալ հատկանիշները միշտ էլ պարտադիր են եղել հայ տղամարդու համար, որի առջև բոլոր դարերում էլ դրված է եղել հայրենիքը զենքով պաշտպանելու խնդիրը:

Հայկական ռազմական պարերը հիմնականում շարային են և ներկայացնում են յուրահատուկ ռազմի տեսարաններ: Մի շարքով կատարվող պարերը խորհրդանշում են բանակը, իսկ դեմ առ դեմ երկու շարքից կազմված պարերը՝ հակառակորդ բանակներ: Շարքերն իրենց հատուկ պարաքայլերով անվերջ քանդվում ու վերակառուցվում են, ընդառաջ գնում իրար, գնում իրար հետևից, ձեռքի պարագաներով կամ բաց ափերով զարկում են իրար՝ ստեղծելով հարձակման տեսարան, ապա հեռանում՝ շրջվելով կամ հետ-հետ գնալով, պատկերելով զորքի նահանջը:

Հայկական ռազմական պարերի առավել տարածված տեսակներն են՝

- **Բերդապարեր.** ներկայացնում են բերդի պաշարման և գրավման մնջախաղային թատերականացված գործողություններ,
- **Հարձակման և նահանջի պարեր՝** Չուբբազի, Փետախաղ, Չոփ-չոփի, Ճիպոտախաղ, Ձիավեն և այլն:
- **Կռվախաղ-պարեր զենքով՝** Թրախաղ, Թուր-մատթալով, Փետապար, Փետախաղ, Մաչինո, Մնգո, Չոլ մայդան և այլն:
- **Մենամարտ-զուգապարեր՝** Ճիպոտապարեր, Խանչալապարեր և այլն:
- **Ծափ-պարեր՝** Յարխուշտա, Ծափ-խաղ: Ծափ-պարերում շարժումները շեշտվում են հանդիպակաց զույգի հետ ծափերով, որոնք կարծես թե փոխարինում են զենքին և յուրովի նմանակում դրանց հարվածն ու բախման ձայնը,
- **Կռիվ պար-խաղեր՝** Քերծի, Ալիտի, Գյոնդ, Մշու և Շատախի, Նարե, Մշու, Խրո: Այս պարերում մեծ դեր ունի թաշկինակը, որը փոխարինում է երբեմնի զինանշաններ կրող դրոշակներին:

Ռազմական պարերը, որպես ազգային պարարվեստի կարևորագույն և սիրված նմուշներ, մեր օրերում էլ պահպանում են իրենց հմայքն ու ինքնատիպությունը: Բանակի մարտական ոգին բարձրացնելու, ինչպես նաև ռազմամարզական դաստիարակության տեսանկյունից, ռազմական պարերն այսօր ևս ունեն արդիական մեծ նշանակություն:

ԳՐԱՎ ԴՐԱԾ ՄՈՐՈՒՔԸ

(պարսկական ժողովրդական հեքիաթ)

Մի մարդ մի օր գնում է հարուստ վաճառականի մոտ՝ պարտք ուզելու:
- Պարտքով մի քիչ փո՛ղ տուր, որ գործերս, առևտուրս կարգի գցեմ, - խնդրում է նա: - Համոզվա՛ծ եղիր, որ պարտքդ վերադարձնելու եմ:
- Ես քեզ պարտքով փող կտամ՝ պայմանով, որ վստահելի մեկը քեզ երաշխավորի, - ասում է վաճառականը:

Մարդը թե.
- Մինչ օրս ոչ մի վստահելի վաճառականի հետ գործ չեմ բռնել և ոչ էլ մեկին գիտեմ, որ ինձ երաշխավորի:
- Լա՛վ, - ասում է վաճառականը, - կօգնեմ, բայց դու քո մորուքից մի մազ պիտի ինձ մոտ գրավ դնես:

Մարդը թե.
- Այդ դեպքում, խնդրում եմ, ինձ մի քիչ վարդաջուր ու մի հատ էլ հայելի տուր:
Երբ վաճառականը նրան հայելի է տալիս ու վարդաջուր մատուցում, մարդը նախ մորուքին խնամքով վարդաջուր է ցողում, ապա գրպանից մի սանր է հանում ու զգույշ սանրում: Հետո սանրի ատամների արանքից մի մազ է հանում, դնում մետաքսե թաշկինակի մեջ, չորս ծայրից ծալում է ու երկու ձեռքով խոնարհաբար մեկնում վաճառականին:

Որոշ ժամանակ անց այդ առևտրականը մեծ հարստություն է կուտակում, գալիս է պարտատիրոջ մոտ, շնորհակալություն հայտնում ու վերցրած պարտքը հետ տալիս:
Մի օր էլ նա մեծ ու բազմամարդ խնջույք է կազմակերպում: Հրավիրվածներից մեկը դառնում է նրան ու հարցնում.
- Որքան հիշում եմ, դու էլ ինձ նման մի աղքատ էիր, այս ամբողջ հարստությունը ինչպե՞ս, ի՞նչ ճանապարհով ձեռք բերեցիր:
Եվ նա անկեղծորեն պատմում է գրավ դրած իր մորուքի պատմությունը:
Հաջորդ օրն այդ աղքատ առևտրականը գնում է մեզ ծանոթ հարուստ վաճառականի մոտ ու պարտքով փող խնդրում: Վաճառականի այն հարցին, թե ծանոթներից ո՞վ իրեն կերաշխավորի, պատասխանում է.
- Աստվա՛ծ վկա, ես ոչ մի ծանոթ չունեմ:
Օրվա հացի կարոտ, խեղճ ու աղքատ մարդ եմ:
Վաճառականը, թե.
- Այդ դեպքում քո մորուքից մի մազ փողի դիմաց ինձ մոտ գրավ դիր:
- Ընդամենը մի մա՞զ, - զարմանում է այդ մարդն ու ձեռքը գցում, մորուքից մի փունջ մազ է պոկում, մեկնում վաճառականին:
Այդ տեսնելով՝ վաճառականը մտածում է. «Եթե այս մարդն ինքն իրեն չի հարգում, պարզ է, թե ինչպես կվարվի դիմացինի հետ»: Եվ, որպեսզի նա չգնա և ուրիշ վաճառականների խաբի, բարձրաձայն ասում է.
- Մի բան լսել ես մորուքի մասին, բայց ունեցածդ այն մորուքը չէ, ուստի պարտքի մասին խոսելն էլ ավելորդ է:



Ահարոն Շիրաջյան

Վերապատվելի Ահարոն Շիրաջյանն ավետարանական նվիրյալների մեջ առանձնանում է իր անհատականությամբ, հոգևոր հովվի իր կոչումին բնորոշ խոր գիտակցությամբ, ազգանվեր գործունեությամբ, որը տվել է իր շոշափելի արդյունքները:

Նա ճանաչված էր որպես որբերի հայրիկ, անապաստան հայուհիների պաշտպան ու բարերար: Եւ այդ ամենը մի ժամանակաշրջանում, երբ քաղաքական իրավիճակը շատ բարդ էր ու վտանգավոր: Վերապատվելի Շիրաջյանն անցել է բազմաթիվ փորձությունների միջով, նա հայրենի բնակավայրում ականատես է եղել 1895թ. Մարաշի ջարդերի սարսափներին, որպես հոգևոր հովիվ դատապարտվել վեցամսյա բանտարկության: Բանտից դուրս գալուց հետո նրա նախաձեռնությամբ մեկ տարվա ընթացքում հայրենի Մարաշի Հայ ավետարանական հիմնավեր եկեղեցին վերաշինվել է, որտեղ նա շարունակել է իր հովվական առաքելությունը:

1915թ. իր հայրենակիցների հետ անցնելով գաղթի ճանապարհը և հասնելով Հալեպ՝ դարձել է ազգային մեծ ձեռնարկի՝ Հալեպի հայկական որբանոցի հիմնադիրներից մեկը: «Պատվելիի որբանոց», «Հալեպի օրհնության տուն»՝ այսպես է կոչվել Հալեպի Ագապա թաղամասում Շիրաջյանի նախաձեռնությամբ 1915թ. հուլիսի 31-ին 13 որբերով բացված որբանոցը, որն իր գործունեությունը սկսել է ցեղասպանության տարիներին և անընդմեջ գործել մինչև 1924 թ.:
Որբանոց մուտք գործած որբերը հաճախ չէին հիշում իրենց անունները: Վերապատվելին նրանց նոր անուններով էր մկրտում՝ Ապառաժ, Վեմ, Ժայռ և այլն՝ հույս ունենալով, որ նմանօրինակ անունները նրանց կպարտադրեն պայքարել կյանքի համար:

Գտնելով և որբանոց բերելով հայ մանուկներին՝ պատվելին հաճախ էր կրկնում. *«Թող հայուն բեկորները փողոցը չմեռնին»:*

Շիրաջյանը կարևորել է որբանոցում հայկական մթնոլորտի և հայեցի կրթություն կազմակերպելու հանգամանքը, հայոց լեզվի ու գրականության, հայոց պատմության ու քրիստոնեության պատմության դասերը, անգամ գիշերային վարժարան են ունեցել, գործել է նաև կույրերի դպրոց:

Որբերի գրագիտության մակարդակը բարձրացնելու համար որբանոցում գրադարան է բացվել: Ազգային վարժարանների երաժշտության ուսուցիչ Գևորգ Նալբանդյանի ջանքերով նվագախումբ է ստեղծվել:
Հայկական ոգին բարձր պահելու համար վերապատվելիի նախաձեռնությամբ որբանոց են այցելել ժամանակի հայտնի հայազգի գործիչներից Ռուբեն Հերյանը, Երվանդ Օտյանը: Վերջինս, խիստ հուզված, միայն մի նախադասություն է արտաբերել. «Որբե՛ր, ես ձեզ շատ կսիրեմ»:
Չնայած արտաքին տարբեր վտանգներին, նույնիսկ մահվան սպառնալիքին՝ վերապատվելի Ահարոն Շիրաջյանը **13 000** որբերի ապաստան է տվել Հալեպի իր որբանոցում՝ պաշտպանելով նրանց թուրքական բոլոր սպառնալիքներից և թուրք զափթիեների 3 խուզարկություններից:

Վերապատվելի Ահարոն Շիրաճեանի կեանքն ու գործը ազգասիրութեան և մարդկային առաքինութեանց օրինակելի համադրութիւն է: Անոր կեանքին հիմնական գիծը, բոլոր գործունէութեանց մղիչ ոյժը, անոր ունեցած անչափ սէրն է իր ազգին հանդէպ: *Արամ Շարվողլեան*

Իսկ դուք գիտե՞ք, որ...

Ֆուտբոլը շատ հին խաղ է: Այն գրեթե 2000 տարվա պատմություն ունի: Շատերը կարծում են, որ նրա ծննդավայրը Անգլիան է, բայց իրականում Չինաստանն է: Ըստ պատմական որոշ աղբյուրների՝ Չինաստանում ֆուտբոլին շատ նման մի խաղ էր տարածված, որը կոչվում էր *ցու չյու*, այն է՝ «հրել ոտքով»: Այն խաղում էին չինացի զինվորները, որպեսզի մարզված և ամրակազմ լինեին:

Անգլիայում ֆուտբոլ սկսել են խաղալ չինացիներից դարեր հետո: Այն անգամ գնդակով չէին խաղում, այլ խոզի փչած աղիքով, և մարզասերներն էլ «գո՛լ» չէին բղավում: Մարզադաշտ նույնպես չկար. խաղում էին փողոցներում: Կանոններ էլ չկային, ինչի պատճառով երբեմն խաղն այնքան էր թեժանում, այնպիսի հրմշտոց ու կռիվ էր սկսվում խաղացողների ու մարզասերների միջև, որ խաղը դառնում էր վտանգավոր, երբեմն էլ՝ մահացու:

Արդյունքում 1314 թ. Անգլիայի արքաներից Էդուարդ II-ն արգելում է այն, ինչից հետո մոտ 250 տարի շարունակ Անգլիայի արքաները մեկը մյուսի հետևից շարունակում են արգելել ֆուտբոլը: Իհարկե մեծ սիրահարները գաղտնի խաղում էին՝ փորձելով աղմուկ ու կռիվ չսարքել փողոցներում; Եթե, իհարկե, դա հնարավոր էր... Բայց հարցն այն է, որ շատերն այս խաղը սիրում էին հենց կռվի, աղմուկի ու ծեծկռտուքի համար: Վերջապես, 150 տարի առաջ մշակվեցին խաղի կանոններ, ու «վայրի» ֆուտբոլը դարձավ այնպիսին, ինչպիսին հիմա է: Եվ եթե առաջ խաղը հետաքրքրում էր միայն անգլիացիներին, ապա կանոններ ստանալուց հետո ֆուտբոլն արագ տարածվեց ամբողջ աշխարհում: